



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material

ԳԻՏԱԿԱՆ  
ԶՈՒՄՃԱԾԻ ԶԲՈՍԱՆՔ

ՊԱՏԿԵՐԱՁԱՐԴ

ՀԱՏՈՐ Բ.

ԱՅԱՄԵԴ գրուամբ ամեն տասն մերկի էա



ՀՐԱՏԱՐԱԿԻՉ  
Տ. Գ. ՓԱՓԱՁԵԱՆ




معارف نظاولیت جلیلہ سنک رخصتیله طیم او لئندرو

## ԱԶԴ


Պարտք կը համարինք շնորհակալութիւն յայտնել ամեն անոնց՝ որք անձամբ կամ նամակա. իրեւց գոհունակութիւնը յայտնեցին սոյն Գիտական գրուանքները հրատարակելնուս առթիւ. Նոյն շնորհակալութիւնը կը պարտինք նաև առ. Անդրանիկ էւ Յակոբ Էֆենտի Ֆենտեան փորագրից Եղբարց. որք դիւրամա տօչելի գնով համեցան պատկերները փորագրել. որով սոյն Երկու հատորները 8—10 դահնեկանի կրցանք ՚ի վաճառ. հանել, ապա թէ ոչ՝ անկարելի էր, զի Գաղղիերէն բնագրին մէն մի հատորը որ 100 պատկեր կը պարունակէ էւ հազարներով կը սպառ.ի՝ 15 դահնեկանի կը վաճառ.ի, մինչդեռ Հայերէնը որ այնջափ չի սպառ.իր, պէտք էր կրկնապատիկ գնովը ըլլալ. Այս բացատրութեամբ կ'ուզեմք անգամ մ'ալ հաստատել թէ միշտ մեր նպատակն եղած է համեստ գնով հրատարակութիւններ ընել, որպէս զի ամեն կարգի ազգայնոց դիւրամատօչելի ըլլալ.

Քաջայոյս ըլլալով որ սոյն հատորն ալ Ա. հատորին ընդունելութեանը բաղդին պիտի արժանանայ, կը կրկնենք մեր շնորհակալիքը.

Հրատարակիչ



## ԳԻՏՆԱԿԱՆ ԶՈՒԿԸ



Օրիորդ Ժիւլի, որ ձեռքը ջուրին մէջ չի թրջելու  
փորձը կատարած էր, (Տես հատոր Ա.) այս անգամ ալ հիւ-  
րերուն ներկայացուց իւր զիտնական մէկ ձուկը, որ պարզ  
ջրով լեցուն ամանի մը մէջ դրուած ըլլալով, տիրուհւոյն  
հրամանին կը հնաղանդէր ամնայն ճշդութեամբ: այ-  
սինքն, երբ Օրիորդը կը հրամայէր մինչեւ յատակը սու-  
զի՞ւ ձուկը ամանին յատակը կ'իջնէր, եւ երբ վեր ենելու  
հրամանը կը տրուէր՝ կը բարձրանար:


Արդարեւ զարմանալի էր այս փորձը. ուստի, հետա-  
քրքիրք անոր գաղտնեացը տեղեակ ըլլալու չափա-  
զանց փափաք մը ունենալին յայտնեցին:

Օրիորդ Ժիւլիի այս խաղին գաղտնիքն է հետեւեալը։  
Նախ եւ առաջ հաւ կիթի մը պարունակութիւնը ծայ-  
րի կողմէն բացուած ծակէն կը պարպէք եւ անոր երկու  
կողերուն վրայ աղէկ տեսակ սեւ մատիտով երկու աչք  
կը շնէք, (տես պատկեր). ապա՝ պատկերին մէջ տեսնու-  
ած ձեւով ձուկի անդուխ մարմին մը կը շնէք կարմիր  
ասուէ (շուշու), որ երկու կտոր ըլլալով իրարու վրայ  
դրուած՝ քովկերէն պիտի փակցնէք կարմիր կնքամոմով,  
վասն զի կնքամոմով փակցուածը ջուրին մէջ իրարմէ չի  
զատուիր. այս տոպլրակի ձեւ առած մարմնոյն մէջ պիտի  
դնէք մէկ քանի հատ արճիճ (առշու) եւ հաւկիթը կիսովին  
այն տոպլրակին բերնին մէջ դնելով՝ նոյնպէս կարմիր  
կնքամոմով պիտի փակցնէք ասուիրն. ահա այն ատեն  
կ'ունենաք Պատրունեաի պէս կարմիր ձուկ մը, եւ զայն  
մինչեւ բերանը պարզ ջրով լեցուն ամանի մը մէջ դնելէ  
ետքը, խցասունկի տեղ քառչուէ (շուշու) կտոր մը ամա-  
նին բերանը կը դնէք իրը ծածկոց եւ բարակ չուանով մը  
կը կապէք Այս քառչուէ ծածկոցը ջուրին հետ հաւասար  
պիտի ըլլայ, այսինքն ջուրը անոր դպչելու է։

Արդ, Օրիորդ Ժիւլիի պէս մէկ ձեռքերնիդ նոյն ա-  
մանին վրայ կը դնէք, (տես պատկեր) եւ հանդիսատեսը  
խօսքի բռնելով որպէս զի կոտհել չի տաք թէ ձուկը  
շարժման մէջ դնողը ձեր նոյն ձեռքը պիտի ըլլայ՝ կ'սկսիք  
զործի. այսինքն իրը մնդմիւ մը նոյն քառչուէ ծածկոցը  
ճնշէք՝ ձուկը մինչեւ յատակը կիշնէ, իսկ եթէ ձեռքեր-  
նիդ առանց ամանին վրայէն վերցնելու թեթեւցնէք՝ ձու-  
կը վեր կ'ելնէ։

Օրիորդ Ժիւլի, իմացուց իւր հիւրերուն նաեւ թէ՝  
իր ձուկը պատրաստ է ներկայ դանուողներէն մէկուն  
անունը արուելուն պէս 'ի նշան յարգանաց մինչեւ վեր  
բարձրանալ, ուստի սկսաւ բացակայ եղող խել մը անձ-  
նաւորութեանց անուններ տալ, ձուկը յատակը կը կենար  
այս միջոցին, որովհետեւ Օրիորդը ձեռքովը ճնշած էր  
քառչուն. բայց երբ այդ անուններուն մէջ ներկայից մէ-  
կուն անունը կ'արտասանուէր՝ ձուկը կ'սկսէր վեր ելնել.  
վասնզի Օրիորդը ձեռքի ճնշումը թեթեւցուցած էր։

## ԵԼԵՔՏՐԱՑԵԱԼ ԹՈՒՂԹԸ



Օդը չոր օր մը՝ խոզանակով մը կամ ձեռքով նիդ՝ շփեցէք բարակ թղթի կտոր մը · քիչ ժամանակէն պիտի ելեքտրանայ, եւ որպէս թէ ոսլայով (գոլ) թաթախուած, ըլլար ձեր ձեռքին, ձեր դէմքին, ձեր զգեստին վրայ՝ փակած պիտի մնայ.

Կրնաք նմանապէս ելեքտրացնել աւելի թանձըր թուղթ մը · օրինակի համար նամակաքարտ մը (տառ-ի բառ-ար) և պիտի տեսնէք որ ինչպէս որ մեղրամոմին, ապակիին, ծծմբին և ռետինի վրայ կ'ըլլայ՝ այս թուղթն ալ կրնայ թեթև մարմիններ իրեն քաշել.

Գաւազան մը՝ աթոռի մը յենարանին վրայ հաւասարակշռելով կեցուցէք, (տես պատկեր) և դրաւ դրէք որ պիտի կրնաք նոյն գաւազանը իւր տեղէն վար ձգել, առանց անոր դպչելու կամ փչելու և առանց աթոռին հպելու :

Ասոր համար բաւական է քարտը կրակին ցուցնելով չորցնել և զօրաւոր կերպով մը շփել թեին վրա, եւ յետոյ այն քարտը գաւաղանին մէկ ծավրին մօտեցնել. այն ատեն գաւաղանը այդ թուղթին պիտի հետեւի, (ինչպէս որ երկաթը կը հետեւի մագնիսին) մինչեւ որ հաւասարակշռութիւնը կորսնցնելով գետինն իյնայ :

—

## ԶԵՐՔԸ ԲԱՑ՝ ԶՈՒՐԻՆ ԳԱԽԱԹԸ ՎԵՐՑՆԵԼ



Գաւաթը ջուրով լեցուցէք .— մէկ երկու մատ պակաս—և սեղանի մը վրայ դնելէ ետքը՝ ափերնիդ գաւաթին բերանը դրէք, ուշադիր ըլլալով որ

չորս մատերնիդ ուղղանիւն ձեւով ծալլուած ըլլան, ինչպէս որ կը տե մնուի Ա. պատկերին մէջ։ Ապա, ափերնիդ առանց գաւաթին շրջադարձին վրայէն վերցնելու, չորս մատներնիդ յանկարծ վեր առէք, ձեռքերն ու ամբողջապէս բացուած ըլլա-



Հու ձեւով. (տես Բ. պատկեր) եւ այսպէս ջուրի գաւաթը իրրև ծծնակ՝ ձեռքերնէդ վար կախուած պիտի մնալ :

Ասոր պատճառը՝ ձեռքի բնուուդ տակ գոյանալիք խոռոշն է, որ կը բաւէ օդային ճնշումին՝ ծանրութեան դէմ հակակուելուն։

## ՏԱԿԱՌՆ ՈՒ ՇԻՇԸ



Գինեգործը և և կամ ամեն անոնք որ տարիներով գինի կը պահեն լեցուն տակառով, գինինին չ'աւրելու համար պարտաւոր են, անոր գողութեան հետեւեալ եղանակին ալ վերահասու ըլլալ:

Պօրտոյի մէջ, լեցուն տակառներս գինի պահող գինեգործի մ. երկու ծառաները օր մը իրարու հետ կը գժտին, անոնց մէ մին խւր նայն ընկերոջ առանց զործիքի տիրոջը զինիներէն գողնալու վրայ ըլլալը կը յայտնէ. այս խօստովանութիւնը գինեգործին ականջին հասնելով,

մարդը յանկարծակիի եկած՝ նոյն ծառայն քաղցրութեամբ կը հարցաքննէ եւ կը յաջողի գողութեան գաղտնիքին տեղեակ ըւլալ։

Ահաւասիկ։

Ամբաստանեալ ծառայն՝ գինիի շիշ մը առնելով զայն մինչև բերանը ջրով կը յեցնէր, այնպէս որ ալ եւս խցասունկը չէր կրնար դրուիլ. յետու, բութամատովը շիշին բերանը գոցելով՝ մինչեւ կողածակը լեցուն եղող տակառին նոյն ծակէն ներս կը դնէր շիշին դլուխը ու մատը կը քաշէր. պատկերին մէջ տեսնուած գիրքով շիշը քանի մը վայրկեան կը բռնէր. որովհետեւ գինին ջուրէն աւելի թեթեւ է. շիշին մէջի ջուրը տակառին մէջ պարպուելով՝ գինին անզգալապէս ջուրին տեղը կ'անցնէր, որով քանի մը վայրկեանէն շիշը անարատ գինիով կը լեցուէր։

Այս խոստովանսւթեան վրայ գինեգործը նոյն երկու անհաւատարիմ ծառաները ճամբելէ ետքը. կը պարտաւորի այնուհետեւ տակառներու կողածակերն ալ կնքել, որ այս օրինակ գողութեան առաջքն առնուելուն միակ միջոցն է։


## ՏԵՍՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՆՔ


Այս զուարճալի փորձը յաջողելու համար աջ կողմի թիւ 13 էջը ոկտօք է կտրել հանել (զոր կը նանք ետքը իր տեղը փակցնել) և սեղանի մը վրայ դնել. ապա, աջ ձեռքի միջամատը պատկերին մէջտեղի ճերմակ միջոցին վրայ դնելով՝ նշանակածն երերցնել, այնպէս որ թուղթն ալ մեկտեղ շարժի, եւ աչքերնիս առանց խաղցնելաւ՝ այն շրջանակներուն սեւեռուել. այն ատեն պիտի տեսնենք որ բոլոր շրջանակները կը դառնան, և որչափ որ մատերնուս շարժումը արագ ըլլայ՝ նոյնչափ շըրջանակները շուտ կը դառնան :

Ահաւասիկ տեսողութեան պատրանքի մի զուարճալի փորձը :

Կը կրկնենք, այս փորձին յաջողութեան անհրաժեշտ պայմանն է նոյն մատերնիս այնպէս մը շարժել՝ որ թուղթն ալ հետը շարժի :

ՏԵՍՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՆՔ





## ԱՆԱՐԱՏ ԿԱՐԾ



Ահաւասիկ փորձ մը՝ որ ոչ ծախսք ունի եւ ոչ  
ալ գործադրութեան մէջ գժուարութիւն։

Կաթին անարամտ կամ խառնուրդ ըլլալն հաս-  
կնալու համար, պէտք է ունենաք պողպատէ  
շինուած առեղ մը, զոր պարզ ջրով լուալէ ետքը  
լաւ մը պիտի սրբէք չորցնէք որպէս զի մաքուր  
ըլլայ. Նոյն ասեղը փորձելիք կաթին-մէջ մխելով  
(տե՛ս պատկեր) ծանր եւ ուղղահայեաց կերպով  
դուրս քաշեցէք. եթէ ասեղին ծայրը կաթէն  
կաթիլ մը մնայ: Վստահ եղիք որ նոյն կաթը անա-  
րատ է. իսկ եթէ ասեղին ոչ վրան եւ ոչալ ծայրը  
բնաւ բան մը չի մնայ: ապահով եղիք թէ նոյն  
կաթը խառնուրդ է։

ԶՈՒԱՆԻՆ ՎՐԱՅ ՇԻՇԸ ԿՐՆԱՅ ԿԵՆԱԼ



Սենեակի մը յարմար մէկ անկիւնը բարակ  
չուան մը կը կապէք, պատկերին ձախ անկիւնին  
մէջ տեսնուած կերպով չուանին վրայ կը դնէք  
բերանը նեղ պարապ շիշ մը, եւ շիշին բերանն ալ


կոթը կոր հովանոց մը կ'անցնէք . շիշը չի սահելու համար շուանին կաւիճ կը քսէք . (պէտք է դիտնալ թէ այս գործողութիւնը նախափորձ մ'է) .

Այս գործողութիւնը լմնալէ վերջը պատկերին աջ կողմի ներկայացուցած փորձին կ'սկսինք . Արդ , նոյն շիշը ջրով կը լեցնենք , շուանին տեղ ալ լայն ժապաւէն . մը կը դնենք . հովանոցին տեղ ալ բռնելիք ծայրը կոր շերեփ (+էֆէն) մը կ'անցունենք . այս շերեփը մէկ կողմ՝ ծռելէ ետքը առանց զայն երերջնելու . կոթէն կը կախենք անօթ մը , (տե՛ս պատկեր) յետոյ կ'սկսինք այն անօթին մէջ կաթիլ կաթիլ ջուր լեցնել , որով՝ շիշին մէջ գտնուած հեղուկը շերեփին վրայէն կամաց կամաց վար կ'իջնայ , որուն տակը ու ըիշ շիշ կամ դաւաթ մը դնելով՝ կը լեցուի .

Այս փորձը թէեւ քիչ մը դժուարին կ'երեւայ , բայց պէտք է յիշենք թէ՝ «Առանց դոյլն աշխատութեան , շի՛ք հաճոյք» .



## ՎԵՍՈՒԿԻ ԲՈՐԲՈՔՈՒՄԸ



Զրով լեցուն ապակեայ ամանի մը ի որը ղետեղեցէք կարմիր գինի պարունակող պղտիկ շիշ մը . այս շիշը պէտք է դոցուած րլլայ վերէն վար նեղ ծակով մը ծակուած ինցանով մը . Դիտենք որ երկու հեղուկներու խտութեան տարրեր լինելուն հետեւանօք ջուրը շիշին մէջ կը մտնէ եւ հոնկէ կը վանէ գինին , որ բարակ թելի մը պէս դուրս կ'ելլայ անկէ . Ահաւ ասիկ այս հանրածանօթ փորձը ներկայացնելու նկարչական սիրուն հնարք մը . Դաճէ կամ պարզ հողէ լեռ մը ձեւացնցէք ջուրի ամանին տակը , որուն մէջ գինիի շիշը ծածկուած ըլլայ . լերան վերի մասին վրայ բացուած մը կը թողուք՝ գինիին դուրս ելնելուն անցք մը ըլլալու համար . Ասիկայ պիտի ըլլա , հրաբուխին բերանը . եթէ ամանին ջուրը երբեմն երբեմն յուղէք՝ անկէ

անցնող գինին հրաբուխի մը հողմածուփ ծուխի  
նմանելով, այսպէսով պիտի կրնաք՝ հանդիսատե-  
սին ներկայացնել Վեսուվի բորբոքման մէկ բաւա-  
կան ճիշդ մանրանկարը :

ԶՈՒՐ ԵՒ ԳԻՆԻ



Առանց իրար խառնելու՝ գաւաթի մը մէջ  
ջուր եւ գինի պիտի լեցնենք, հետևեալ կերպով։  
Գաւաթին մէջ կիսովին ջուր կը լեցնենք,  
որուն վրայ կաղինի մեծութեամբ փոր հացի կտոր  
մը կը դնենք, յետոյ գինին՝ ծանր ծանր կը լե-  
ցնենք նոյն փոր հացին վրայ, պատկերին մէջ տես-  
նուած ձեւով, այն ատեն պիտի տեսնենք որ ջու-  
րը գաւաթին յատակը եւ գինին անոր վրայ կը  
կենան՝ առանց իրար խառնուելու։

ՇԻՇՆ ՈՒ ԴՐԱՄԸՀ



Առանց ձեռք դպրունելու՝ քառթ մէճիտը  
պիտի կրնանք շիշին մէջ դնել, հետեւեալ կեր-  
պով։

Բերնէն քառթ մէճիտ մը սղմուելու աստի-  
ճան լայնութիւն ունեցող ջուրի պարապ շիշ մը  
կը դնենք սեղանին վրայ. նոյն շիշին բերանը պի-  
տի դնենք խաղի թուղթ մը կամ այցաքարտ մը  
եւ նոյնին մէջտեղն ալ քառթ մէճիտ մը. արդ՝  
բութամատին ծայրը միջնամատին ծայրին հպած՝  
հարուած մը կու տանք թղթին, (այսինքն պօնդ,  
ֆէսէ) այս հարուածէն թուղթը մէկ կողմ պիտի  
թռի (տես պատկեր), իսկ քառթ մէճիտը շիշին  
մէջ պիտի խնայ թը նկ՝ ձայն մը հանելով։

ՀՈՂՄԱՆՈՐԻ



Այս վերնագիրը կաբդալով, չի կարծուի թէ  
գետի մը եղերքը գեղեցիկ մարդադետնի մը մէջ  
շինուած հողմաղօրիի մը վրայ պիտի խօսինք, այլ  
տանը մէջ ընտանեաց և կամ բարեկամաց ներկա-  
յութեանը խիստ դիւրութեամբ կատարուելիք  
զուարճալի փորձ մը պիտի յանձնարարենք, ո-  
րուն համար պէտք եղած նիւթերը մէկ ճերմակ  
գոյն շղարշէ (հու ուսաբառ), կտոր մը խաւաքար-  
տէ եւ ճրագէ մը կը բաղկանան :

Սկսինք :

Առէք կտոր մը խաւաքարտ և պատկերին  
մէջ ցոյց տրուած կերպով պատուհանի շրջանակի

մը պէս զայն քառակուսի ձեւով կտրեցէք, եւ շղարշը անոր վրայ բակցուցէք. Եթէ այդ շղարշին մէջէն ճրագի մը լոյսին նալինք՝ շուրջը անոսը եւ ծիրանի դօտիի ձեւով, մէջ տեղն ալ լուսաւոր խաշաձեւ մը պիտի տեսնենք. Այս զարմանալի երեւոյթը բնագիտութեան մէջ բժեկբեկումն լսոյց անուամբ նշանակուած է:

Այս բացատրութենէն ետքը շարունակենք մեր փորձը.

Խաւաքարտէ գլանաձեւ աղօրի մը շինեցէք, որուն գագաթը երկուքնոցի մեծութեամբ ծակ մը բացուած պիտի ըյլաւ, որպէս զի մէջը վառելիք ճրագը շունչ առնէ եւ խաւաքարտը չայրի, այս աղօրիին մէջ վառուած ճրագ մը դնելէ ետքը, զան՝ սենեկին մէկ անկիւնը դրուած սեղանի մը վրայ կը դնէք, (տես Պատկեր). պիտի հարցընէք թէ ո՞ւր է ասոր թեւերը իրաւունք ունիք. միթէ անթեւ հողմաղօրի կ'ըլլա՛. մ'աճապարէք, հիմա պիտի տեսնէք. Եթէ նախապէս շրջանակաձեւ խաւաքարտին վրայ փակցուած այն բարակ շղարշին մէջէն աղօրիին նալիք, անոր դբան քովերը լուսաւոր չորս թեւեր կ'երեւան. եւ եթէ նոյն շղարշը ձեռքով դարձնէք շուտով այն լուսաւոր թեւերուն արագաբար դառնալը կը տեսնէք. Ահաւասիկ ձեզի թէ՛ թեւաւոր եւ թէ անթեւ հողմաղօրի մը:

Եթէ ուշադրութեամբ պատկերին նալիք՝ դժուարին կէտ մը իսկ չի մնար.

## ԳՐՈՒԱԾ ՄԸ ՎԱՅՐԿԵՆԱՊԻՍ ԸՆԴՈՐԻՆԱԿԵԼ

Քիչ մը շաքար դրէք այն թանաքին մէջ պըով  
պիտի դրէք օրինակուելիք նամակը . դրու-  
թեան վրայ դրէք սպունգով մը թրջուած անսո-  
սինձ եւ բարակ թերթ . մը թուղթ . վրայէն ան-  
ցուցէք շափաւորապէս անաքցած արդուկ մը . եւ  
անմիջապէս պիտի ունենաք ձեր նամակին հակա-  
դարձ մէկ օրինակը :

## ՏԱՄՆԵՐԿՈՒԽԻԳԻՆ ՄԷՋ ՎԵՑ ԱՆԳԱՄ ՏԱՄՆԵՐԵԲ ԽՆՁՊԻՍ ԿՐՆԱՔ ԳՏՆԵԼ


Թուանշանները հետեւեալ կերպով զրելու է .

1. 2. 3. 4. 5. 6. 7. 8. 9. 10. 11. 12. եւ միշտ ա-  
ռաջին եւ վերջին . թուանշանները առնելով կըսէք .

$$\left. \begin{array}{rcl} 1+12 & = & 13 \\ 2+11 & = & 13 \\ 3+10 & = & 13 \\ 4+9 & = & 13 \\ 5+8 & = & 13 \\ 6+7 & = & 13 \end{array} \right\} \quad \begin{matrix} 6 \text{ անգամ} \end{matrix}$$

Ահաւասիկ 1 էն մինչեւ 12 թեւերը մէկ մէկ անգամ  
գործածելով կրցանք 6 անգամ 13 գտնել :


## ՄԵԿ ԼՈՒՑԿԻՌՎ ՏԱՄՆ ԵՒ ՀԻՆԳ ԼՈՒՑԿԻ ՎԵՐՑՆԵԼ



Սեղանի մը վրայ դրէք լուցկի մը, որուն  
վարի ծայրը սեղանէն քիչ մը դուրս ձգելու է՝  
ետքէն վերցունելու դիւրութիւնը ունենալու  
համար. ապա ֆօսֆօրացեալ ծայրերը դէպ  
՚ի վեր գալու պայմանաւ եւ պատկերին վարի  
մասին մէջ տեսնուած ձևով 14 հատ քառանկիւն  
և կամ հաւասար կլորութեամբ լուցկիներ դէմ  
առ դէմ կը դնէք նոյն մէկ լուցկիին վրայ։  
Արդ, եթէ այս վիճակին մէջ նոյն տակի մէկ  
լուցկիին ծայրէն բռնէք վերցնէք՝ բնական է որ

ամէնքն ալ պիտի թափին . բայց եթէ այն և՛ ին  
մէջտեղը լուցկի մը ևս դնէք՝ որ տակի դրուած  
լուցկիին ուղղութեանը դայ , պատկերինվերի մա-  
սին մէջտեսնուած ձեւով կրնաք զանոնք վերցնել :

ԲԱՐԱԿ ԱՌԱՍԱՆԸ (ՀԵՏԵ)




Ահաւասիկ բարակ առասանը կտրելու նոր ե-  
զանակ մը .

Մկրատ , զմելին եւ կամ դանակն չգտնուած  
ատեն բարակ առասանը դիւրութեամբ պիտի կա-  
րենաք կտրել :

Առասանը ո՞ր տեղէն կտրել ո՞ր կը փափաքիք՝  
հօն կապ մը ըրէք . անոր ծայրերը երկու ձեռ-  
քերնուդ բաթտեցէք , (տես պատկեր) եւ երկու  
կողմէն ցնցելով ուժով մը քաշեցէք , այս կերպով  
կապ ըրած տեղելնուդ պիտի կտրուի եւ ձեռքեր-  
նիդ ալ չպիտի ցաւցնէ .

## ԶԱՐՄԱՆԱԼԻ ԱՅՐՈՒՄ ՄԸ



Պատկեր Ա.

Այս գիշեր Նիւ—Եօրքի Էտէն Միւզէ թատրոնին մէջ, հռչակաւոր ձեռնածու Պ. Բօվէլի կողմանէ երկրորդ եւ վերջին անգամը լլալով՝ զարմանալի այրում մը տեղի պիտի ունենայ :

Այս հետաքրքրաշարժ յայտարարութեան վրայ՝ առաջին ներկայացման նհրկայ զ տնտող հանդիսատեսներէն աւելի ստուար բազմութիւն մը՝ նոյն գիշերը, զիրար հրմշտկելով՝ թատրոնէն ներս կը մտնէին :

Կէս ժամ չ'անցած, թատրոնը լեցուեցաւ հետաքրքիրներով, այնպէս որ՝ ասեղ ձգելու տեղ չի կար :

Վարագոյթը բացուեցաւ :

Պ. Բօվէլ, երիտասարդ, գեղանի եւ բոլորովին ճերմակներ հագած կնոջ մը ձեռքէն բռնած թատերաբեմին առջեւը կանգնած կերևար :


Ձեռնածուն, զարմանալի այրումային զոհն ըլլալիք նոյն գեղանի երիտասարդուհին հանդիսատեսներուն ներկայացնելէ ետքը, առաջին պատկերին մէջ տեսնուածին պէս երեք փեղկերու մէջտեղը դրուած հինդ ոտքով սեղանի մը վրայ հանեց զայն :

Այս սեղանին ուզգութեանը, առաստաղէն ժողվուած տոպրակ մը կախուած էր. Սեղանին հինգերորդ ստքին քով չորս ճրագ կը վառէր, որով սեղանին տակը պարապ ըլլալուն այլ եւս կասկած մը չէր մնար :

Պ. Բօվէլ. առաստաղէն կախուած նոյն տոպրակը վար առնելով՝ անոր դլանաձեւ ըլլալը եւ պատռուածք մը չունենալը հանդիսատեսներէ մէկ քանիներուն ցուցնելէ ետքը՝ զայն դարձեալ իր տեղը կախեց. Այս գործողութենէն ետքը չուանի մը միջոցաւ տոպրակը վարագոյրի պէս վար իջեցուց (աես Պատկեր Ա.) եւ երիտասարդ կինը այն տոպրակին մէջ առաւ :

Յանկարծ ատրճանակի պայթում մը լսուեցաւ,

Եւ տոպլրակը մէջէն կը առած՝ չորս կողմէն  
մուխ եւ բոցեր սկսան բարձրանալ (տես Պատկեր Բ)



Պատկեր Բ.

Պատկեր Գ.

բայց այս տոպլրակը անկիզելի նիւթէ մը շինուած.  
Ըլլալէն՝ չէր այրեր, թէպէտեւ վրայի եւ յատա-  
կի կողմէն բոցեր դուրս կ'ելլէին.

Այս տեսարանը քիչ մը ժամանակ տևելէ ետ-  
քը Պ. Բօվէլ չուանը ձեռք առած՝ սկսաւ տոպ-  
լրակը կամաց կամաց դէպ 'ի առաստաղ քաշել.

Ո՞վ սոսկու մ. այն գեղանի երիտասարդուհին  
մնխիր դարձած էր եւ սեղանին վրայ կ'երեւար  
մի քանի սսկորներն եւ գանկոսկը. (Պատկեր Գ.)

Մինչդեռ հանդիսատեսք այս տեսարանէն ունեցած զարմանքնուն ափ 'ի բերան մնացեր էին, Պ. Բօվէլ, Ամերիկացւոց յատուկ տեսակ մը հպարտութեամբ գլխովը զանոնք բարեելէ ետքը թատերաբեմէն հեռացաւ եւ վարագոյրը իջաւ.

Անմիջապէս միահամուռ եւ սաստիկ ծափահարութեամբ, «Բօվէլ 'ի տե՛ս» աղաղակը սկսաւ ամէն կողմէ :

Վարագոյրը նորէն բացուեցաւ եւ պարոն Բօվէլ ներկայացաւ, բայց՝ դարձեալ նոյն գեղանի երիտասարդուհոյն ձեռքէն բռնած, որու հետ ողջունելով հասարակութիւնը, մեկնեցան տեսարանէն :

Ահաւ ասիկ իրաւամբ խիստ զարմանալու արժանի գործողութիւն մը, որուն զաղտնիքը կը պարզենք հետեւեալ տողերով:

Սեղանին շրջանակաձեւ մակերեսյթին կէսը Գ. պատկերին մէջ տեսնուածին պէս եռանկիւնաձև տախթի (Քէքչէն) մը ծալրին վրայ զետեղուած է. Այս տախթը կը բազկանայ հանդիսատեսներուն դէմը դրուած երկու պատի հայելիներէ. այս հայելիներուն իրարու ունեցած հակումը 90 աստիճան և փեղկերուն ունեցած հակումը 45 աստիճան է,

Սեղանը իրապէս երկու ոտք ունի. միւս երկու ոտքերը հայելիներուն մէջի անդրադարձումէն յառաջ կռւգան. հինգերորդ ոտքն ալ հայելիներուն ցոլացումներուն իրար կտրած մասն է: նմանապէս ճրագներն ալ երկու հատ ըլլալով,

հայելիներուն մէջ անդրադառնալնէն՝ չորս կերեւան։

Երբ տոպրակը Դ. Պատկերին մէջ ցոյց աըրուած կերպով վար իջեցունելէ ետքը բացուի՝ մանկամարդ կինը Դ. Պատկերին մէջ տեսնուածին պէս՝ սեղանին և տեսի կողմը դանու ած կափարիչի մը



Պատկեր Դ.

միջոցաւ նոյն տախթին տակը կը մտնէ, եւ անմիջապէս գանկոսկը եւ միւս ոսկորները սեղանին վրայ կը դնէ, ու քանի մը դիւրավառ նիւթերու կրակ տալով, ատրճանակի պայթումէն ոնմիջապէս ետքը զանոնք ոսկորներուն վրայ կը դնէ եւ ամենայն հանդարտութեամբ ներս կը քաշուի։ (տես Պատկեր Դ)։

## ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՊՏՈՒԴՆԵՐ

Առանց դործիքի, մանաւանդ խիստ ղիւրութեամբ ճրագները պատկերներով զարդարելու եղանակը սովորեցնեց. (Տես համար Ա. էջ 33) Կիմա ալ պատուղները, այսինքն խնձոր, տանձ, դեղձ եւ սերիեւիլը պիտի կրնանք պատկերներով զարդարել հետիւեալ պարզ եղանակաւ.

Ձեր ճաշակին համեմատ, տպագրուած, թռչնոյ, աքաղաղի եւ կամ մարդու մը պատկերը առէք, եւ անոր թէ շուրջը եւ թէ մէջը գտնուած ճերմակ թուղթը կտրեցէք հանեցէք. ասքա այն ոեւ պատկերը ձեր ընտրած (շատ չի հասունցած) պտուղին վրայ բակցուցէք, երեսի կողմը պըտուղին գալու պայմանաւ եւ զայն քանի մը օր արեւուն ջերմութեանը դէմ դնելէ ետքը՝ թուղթը վրայէն հանեցէք, պիտի տեսնէք որ պատկերը հոն փոխադրուած է:

Ահա այս բնական երեւոյթը եղած է առաջին անգամ լուսանկարի արհեստին մտքերու մէջ ծնունդ տուողը:

## ԿՈՒԶԵՎ ԶՄԵՌԸ ՎԱՐԴ ՈՒՆԵՆԱԼ

Վարդերու կոկոնները կտրեցէք այն միջոցին երբ այլ եւս պիտի բացուին. ցողունը ծեփեցէք մեզրամամով, թըդթեայ տուփի կամ եղջիւրի մը մէջ լաւ կերպով փակեցէք ամբողջն եւ պահարանի մը մէջ կախեցէք:

Դեկտեմբերին, յունուարին եւ նոյն խև փետրուարին մէջ կը բաւէ ցողունին ծայրն այրել եւ կոկոնը պաղ ջուրի մէջ դնել՝ բացուած վարդ մը ունենալու համար:


ԱՃԱՆ ԶԲՈՍԱՆՔ ՄՀ



Պատկերին մէջ տեսնուած ձեւով երկու ծխափայտեր կամ խողովակներ բռնեցէք վառուած ճրագի մը մութ մասին մէջ, և այդ խողովակներուն վերի ծայրերուն զետեղեցէք մէկ մէկ մարած լուցկի, անմիջապէս խողովակներու երկու ծայրերէն ալ կ'սկսին բոցեր ելնել, այս կերպով մէկ ճրագի միջոցաւ երեք լոյս ունեցած կըլլաք:

Տեղն է ըսել թէ վառուած ճրագի մը մութ տեղը միշտ պաղ կըլլայ, հետեւաբար հոն մխուած ո եւ է իր դիւրաւ չ'այրիր:

ՎԱՅՐԻ ՇԱԳԱՆԱԿԻ ԿԱՆԹԵՂԸ



Երբ վայրի շագանակը հասուննալէն ետքը  
դետին իյնայ, կրնանք զայն իրրեւ կանթեղ  
դործածել հետեւեալ կերպով։

Նախ եւ առաջ վայրի շագանակը չորս կող-  
մէն ասեղով մը պիտի ծակծկենք, ըստ բաւակա-  
նին . յետոյ զայն 12 ժամ ձիթափողի մէջ ձգելէ  
ետքը, կեդրոնը քիչ մը խոշոր ծակ մը կը բա-  
նանք . — այս ծակը շագանակին մինչեւ յատակը  
չպիտի բացուի . — նոյն ծակին մէջ պիտի զետե-  
ղենք բամպակէ թելով պլորուած պատրոյգ մը .

Արդ , Եթէ շադանակը նոյն վիճակին մէջ ջրով  
լեցուն դաւաթի մը մէջ դնենք , ջուրին երեսը  
կը մնայ , (տես պատկեր) եւ պատրոյդը մինչեւ  
առաւօտ կը վառի . Ահաւասիկ զուարճալի միան-  
գամայն խնայողական կանթեղ մը .

Այս դործողութեան մէջ ուշադրութեան  
արժանի կէտ մը կայ . շագ անակը ջուրին երեսը  
կեցնելու համար պէտք է երկայն շադանակ չի-  
գործածել , այլ՝ տափակ տեսակէն ընտրել , մի-  
անգ ամայն պատրոյդին յատկացեալ ծակը բանա-  
լէ առաջ շադանակը անդամ մը ջուրին երեսը  
դնելու ենք՝ անոր կեդրոնը ճշդելու համար , եւ  
ետքը ծակենք . Եթէ այս կերպով շարժինք , պատ-  
րոյդին ջրամայն ըլլալով մարելուն առաջքը առած  
կըլլանք .

## ԽԱՂԻ ԹՈՒՂԹԸ

Ընտանեկան երեկոյթի մը մէջ մի քանի երիտասարդք խաղի թուղթերով տեսակ տեսակ զուարձալի փորձեր կը կատարէին, զորս ներկայից մեծ մասը արդէն գիտնալնուն, և՛հ, այդ ալ բան մ'է, ըսելով կը ծիծաղէին. երբ այս պարոնները իրենց զիտցած խաղերը լմնցուցին, երիտասարդ մը, որ մինչեւ այն ատեն անկիւնը նստապծ էր անձայն, սենեկին մէջ տեղը դրուած սեղանին քով եկաւ եւ 200ի թուղթերը ձեռք առնելով խոստացաւ նոյն 36 թուղթերը սեղանին վրայ դոց դնել եւ անոնց անունները մէկիկ մէկիկ տալ, այսինքն նախապէս իրեն ըսելիք թուղթը պիտի բանար երկրորդ անձ մը:

—Ե՛հ, ըսաւ երիտասարդ մը ծաղրածու եղանակաւ, եթէ ես ալ 9 օրեւները, նոյնպէս 9 մաշները, 9 գուբոները եւ 9 սուրեները կարգաւ իրարու վրայ շարեմ, կը ռնամ յաջողիլ:

—Բայց եթէ ուղուածին չափ թուղթը կտրեմ, հարցուց առաջարկողը գոռողութեամբ, եւ ձեր ըսածին պէս փոխանակ միօրինակ թուղթերը իրարու ետեւէ կարգաւ ըսելու, զոր օրինակ օրեւին մէկնոցին անունը տալիք ետքը մաշի մը ութնոցը, անկէ ետքն ալ գուբոի մը կամ սուրենի մը տասնոցին անունը տամ, այսինքն առանց գոյներու եւ թիւերու կարգի խառն կերպով ըսեմ, այն ատեն ալ պիտի կրնա՞ք յաջողիլ:

—Ա՛, խնդիրը փոխուեցաւ, ըսաւ նախայարձակ պարոնը զարմանահար, եւ կամացուկ մը ետ քաշուեցաւ. Ասոր վրայ խոստացող պարոնը սկսաւ իւր փորձին, հետեւեալ կերպով:

Նախ 36 թուղթերը 4 կարգի վրայ տարածեց.

|         |           |               |
|---------|-----------|---------------|
| Ա. կարգ | Գուբաները | (խառնի խուռն) |
| Բ. կարգ | Մ-ՀՆԵՐԸ   | »     »       |
| Գ. կարգ | ՕՐԵՆԵՐԸ   | »     »       |
| Դ. կարգ | ՍՊ-ԸՒՆԵՐԸ | »     »       |

ու անոնց մէջէն հետեւեալ կարգաւ հաւաքեց թուղթերը  
եւ իրարու տակ դրաւ. (առանց անուննին տալու):

Գուբային 7 նոցը, անոր տակը Մաչախն 1 նոցը, ա-  
նոր տակը Օրեախն 8 նոցը, Սպաթիին 10 նոցը, Գուբախն  
2 նոցը, Մաչային 9 նոցը, Օրեախն աղջիկը. Սպաթիին  
թահլն, Գուբախն մանչը. Այս առաջին 9 թուղթերէն  
ետքը դարձեալ շարունակեց. (որովհետեւ Գուբաէն ետքը  
Մաչա կուգար) Մաչախն 7 նոցը, Օրեախն 1 նոցը. Սպա-  
թիին 8 նոցը, Գուբաի 10 նոցը, Մաչախն 2 նոցը, Օրեախն  
9 նոցը, Սպաթիի աղջիկը, Գուբաի թահլն, Մաչախն ման-  
չը. Դարձեալ Օրեախ 7 նոցը Սպաթիի 1 նոցը եւայլն. Այս  
կարգաւ 36 թուղթերը հաւաքելէ ետքը, զանոնք ներկայ  
հանդիսատեսներուն մէկ մէկ անդամ կտրել տուաւ, վրայի  
կտրուածը միշտ տակը դնելով. ապա՝ թուղթերը առաւ  
եւ առանց կուահել տալու թէ աչքին ծայրովը տակի  
թուղթին նայեցաւ, նոյն գոց թուղթերը սեղաննին վրայ  
դրաւ եւ սկսաւ մէկիկ մէկիկ անոնց անունը տալ. Բ. անձ  
մը անոր ըսելէն ետքը թուղթը կը բանար. այսպէս շա-  
րունակեց մինչեւ վերջը՝ ի մեծ զարմացումն ներկայից:

Մնթաղրենք թէ թուղթը կտրուելէ ետքը տակի  
թուղթը Մաչախն 1 նոցը ըլլայ. անկէ ետքի գալիք թուղ-  
թը պիտի ըլլայ օրեախն 8 նոցը. հետեւաբար վրայի բաց-  
ուելիք առաջին թուղթն է օրեախն 8 նոցը. անկէ ետքը  
սպաթիին 10 նոցը, գուբախն 2 նոցը, մաչախն 9 նոցը  
եւայլն:

Այս փորձին մէջ յաջողելու համար պէտք է դոց ընել հետեւեալը.

7 նոց, 1 նոց, 8 նոց, 10 նոց, 2 նոց, 9 նոց, աղջիկ. թահը. մանչ:

Աւելի աղէկ կըլլայ եթէ առաջուց թուղթերը կարգադրուի եւ ներս բերուի, կամ թուղթերը և կարզի վրայ տարածելէ ետքը շուտ ժողուելու է որ, (առանց անուննին տալու) գաղտնիքը չի մատնուի, Ուստի նախապէս լաւ մը փորձ ընելու է:



Թուղթերը այսպէս կարգադրելէ ետքը, կրնաք 2 անձեր դէմ առ դէմ Սկամսլիլ խաղալ, (1 խաղ միակ) եւ դիմացինիդ քաշելիք թուղթերը նախապէս իրեն ըսել՝ ինչպէս նահե ձեր քաշելիք թուղթը,

Վերջապէս, այս զուարճալի փորձը յաջողութեամբ հրապարակաւ. կատարելու համար դարձեալ կը կրկնենք թէ աղէկ մը փորձելու է առանձինն:



Փորձը լաւ մը կատարելէ ետքը՝ ուզողը կրնայ թուղթերուն կարզը փոխել, այսինքն փոխանակ Ա, կարգը դուբաները տարածելու՝ մաչա կամ օրեաները տարածել, միայն թէ՝ կարմիր գոյնէն ետքը ոեւ գոյն մը զնելու է, կամ սեւէն ետքը կարմիր, որպէս զի հանդիսատեսին զարմանքը կրկնապատի:




ՅՈՒԱՅՈՒՑԻՉ ԴԳԱԼԸ



Յայտնի է որ մանուկները երբեմն փողացաւէ  
կը տառապին . եթէ անոնց բերանը բանալ տալով  
մէջը նայինք՝ չենք կրնար կոկորդին խորը լաւ մը  
զննել . արդ , այս պարագ ալին մէջ յաջողելու հա-  
մար դիտութիւնը հետեւ եալ եղանակը կը սովոր-  
ցնէ մեղի .

Ճրագի մը դէմ ապուրի փայլուն դդալ մը  
բռնեցէք, որուն դոգաւոր մասը լոյսին դարձած  
ըլլայ. դուք հիւանդին զլիուն ետեւը կայնելով՝  
ըսէ՛ք անոր որ ըերանը դդալին ուղղութեանը  
բանայ (տե՛ս պատկեր). այսպէս, դդալին ցոլա-  
ցուցիչ ճառագայթները կոկորդին խորը բաւական  
պիտի լուսաւորեն եւ դայն՝ (կոկորդը) հակառակ  
դերքով ամբողջ զին ձեզ ողիտի ներկայացնեն  
դդալին մէջ, որ կո՞ր հայելիի մը յատկութիւնը  
կը ստանայ.

ԴԻՒԹԱԿԱՆ ԹՈՒՂԹԻ



Օր մը ձեռնածուին մէկը տրցակ մը խաղի թուղթ առած՝ անոր մէջէն երեք անձերու մէկ մէկ թուղթ քաշել տալէ հտաքը՝ այն թուղթերուն ինչ ըլլալը հարցուց.

Առաջին քաշողը հաղիւ թէ գքառեակի մանչ է, ո պատասխանը տուեր էր, ահա ձեռնածուն ձեռքի ունեցած նոյն տրցակ մը թուղթը հողմահարի ձեւով պարզեց և թուղթերուն ամենքն ալ գքառեակի մանչ երեւցան հանդիսականաց:

Ձեռնածուն Բ. անձին ուղղեց իւր հարցումը, որ Սունիչն աղջիկը քաշած ըլլալը յայտնեց. ո՞վ զարմանք,

նոյն տրձակ մը թուղթերը այս անդամ ալ Սպաթիի աղջիկ երեւցան։

Վերջապէս Գ. անձը Գուբան մէկնոցը քաշած ըլլալով թուղթերը այն անդամ ալ Գուբայի մէկնոց երեւցան։

Առոր գաղտնիքն է հետեւեալը։

Նախ պէտք է զիանալ թէ այս թուղթերը 16 հատ են, հետեւեալ կերպով կազմուած։

Տասն եւ վեց հատ Գուբան մէկնոց, կւամ վրան Գուբան պէս մէկնոց գծուղբելու նպատակաւ այնչափ թուով խաղի ճերմակ թուղթ պատրաստուելէ եւոքը, 8 հատ քառեակի մանչ, 8 հատ տղ Սպանիի աղջիկ առնելու եւ ասոնք (Ճեւ 2, B, եւ C) զմելինով եւ քառակով մը տրամադապէո կտրելով երկուքի բաժնեւու է։ Գուբանի մէկնոցին ետեւը սոսանձով քառեակի մանչ ևն C կտորը եւ Սպանիի աղջկան D կտորը (Ճեւ 2) այնպէս մը փակցնելու է որ կէսը քառեակի մանչ եւ կէսը Սպանիէ աղջիկը ըլլալով, մէկ կողմէն Գուբան մէկնոցը A եւ միւս կողմէն ալ B թուղթը ցուցնող խաղի թուղթ մը երեւան գայ։

Այս խաղին մէջ յաջողելու համար պէտք է որ նոյն երեք տեսակ թուղթին 10 ական հատէն տրցակ մը պատրաստուի, որուն մէջէն քաշել տալու է թուղթը։ Քաշող անձը թուղթին վրայ նայած ատեն՝ ձեռնածուն իւր թեւին մէջ կը դնէ նոյն 30 թուղթը եւ արդէն պատրաստուած տրցակովը իւր խաղը կընէ։

Տրցակը փոխելու ատեն ձեռքի շուտութիւն եւ հանդիսատեսը խօսքի բռնելը՝ այս խաղին յաջողութեան առաջին պայմանն է։

ԼԵՑՈՒՆ ՇԻՇՆ ՈՒ ԴԱՒԱԹԸ



Զըսվ լեցուն շիշի մի միջոցաւ՝ լեցուն դաւաթ  
մը պիտի պարտղենք։ Անշուշտ զարմանք պիտի  
պատճառէ ձեզ այս առաջարկը, բայց հիմա կը  
համոզուիք անոր յաջողութեանը։

Նախ եւ առաջ ջուրը դետինը չի թափելու  
համար անօթ մը պէտք է, որուն մէջ պիտի բըռ-  
նենք ա՞ ձեռքով դաւաթ մը լեցուն ջուր . . (տես  
պատկեր) յետոյ, շիշի մը մէջ պարզ ջուր կը լե-


ցնենք, "ըուն բերանը պիտի դնենք խցասունկ մը . այս խցասունկը զետեղելէ առաջ անոր վրայ քովէ քով երկու ծակ պիտի բանանք, այս ծակերէն պիտի անցնենք մատիտի երկայնութեամբ եւ յարդի շիւղի կլորութեամբ երկու խողովակներ, մին երկայն ըլլալու պայմանաւ, ինչպէս որ կը տեսնուի պատկերին մէջ :

Այս գործողութիւնը կատարելէ ետքը կարճ խողովակին բերանը մեղրամոմնվ թեթեւ մը պիտի գոյցենք ու շիշը ձախ ձեռ քով դլիխի վայր պիտի դարձնենք, փոքրիկ խողովակը լեցուն դաւաթին մէջ կիսովին ընկղմելու պէս պիտի ընհնք եւ բերնին մեղրամոմը երկրորդ անձի մը միջոցաւ պիտի հանենք. Սրուակը հաւասարակշռութեան մէջ պահելու համար մեծ ու շադրութիւն պէտք է :

Արդ պիտի տեսնինք որ շիշին բերնի նոյն երկայն խողովակին միջոցաւ դաւաթին ջուրը անօթին մէջ պիտի հոսի կաթիլ կաթիլ, եւ այնպէս դաւաթը բոլորովին պիտի պարպուի :

Գաւաթին ջուրը պարպուելէ ետքը եթէ շիշը դարձեալ նոյնպէս հաւասարակշռութեամբ բըռնենք, օդը պղտիկ խողովակէն ներս մտնելով՝ շիշին մէջի ջուրն ալ կը պարպէ :


ԻԱՀԻ ԹՈՒՂԹԻ ՄԸ ՄԷՋԵՆ ԱՆՑՆԻԼ



Երեկովի մը մէջ, ուր խաղի թուղթի հընարքներով կ'սկսին ժամանակ անցընելերբ տեսնէք որ հնարքներու շարքը սպառելու մօտ է, առաջարկեցէք այդ. հնարքները ընողին թէ՝ կըքնայ թուղթի մը մէջէ ամրողջ մարմնովը անցնիլ. Բնական է որ յաւակնոտութեամբ մը ձեզ պատասխանէ թէ, «շատ դիւրին է ատիկայ, եթէ թուղթը բաւական տարածութիւն ունենայ». բայց պիտի ապշի, եթէ լրջութեամբ իմացնէք իրեն թէ սովորական մեծութեամբ խաղի թուղ-

թի մը մէջէն անցնելուն վրայ է խնդիրը, եւ պիտի սկսի խորհիլ. ոակայն դուք երկար ատեն մտմտալ չի տալու համար, կ'առնէք խաղի թուղթ մը եւ անոր երկարութեանը, թիւ և պատկերին մէջ տեսնուածին նման, երկու եղբերուն մօտ յանդող ճեղք մը կը բանաք, յետոյ այս ճեղքին ուղղութեամբ երկուքի կը ծալէք թուղթը, և մկրատով, թիւ Զ պատկերին ցոյց տուածին պէս Յ ճեղքուածքներ կը կրանաք թուղթին երկու եղբերուն վրայ. ապա կամաց մը երկու ծայրերէն քաշելով թուղթը կը բանաք: Ասանկով թուղթը կերպարանափոխուած կըլլայ ձգտուն շրջանակի մը, որ կը բակղանայ թուղթին պղտիկ ու նեղ կտորներովը, և որոնք իրարու հետ, ձեր քաշելուն զօրութեանը համեմատ, աւելի կամ նըւաղ բացութեամբ մուր անկիւններ կը կազմեն. Արդ, ձեզի ուրիշ բան չի մնար ընել, բայց Եթէ այդ շրջանակին մէջէն յուշիկ մը անցնիլ:

ԶԻՆԱԿԱՆ ՍՏՈՒՆՐՆԵՐ



Ահաւասիկ խիստ պարզ միջոց մը պատին վրայ Զինական ստունրներ յառաջ բերելու :

Գործողութիւնը կատարողը հանդիսատեսին ետին պէտք է գտնուի :

Սեղանի մը վրայ ճրադ մը դրէք և այս ճրադին դիմացի պատին վրայ թերթ մը ճերմակ թուղթ փակցուցէք . ճրադին ու թուղթին մէջ տեղը դրէք անթափանց մարմին մը , օրինակի համար խոշոր գիրք մը կամ պատի օրացուց մը . նոյն ոեղանին սէկ կողմը հայելի մը պիտի դնէք . այս

հայելիին ցոլացումը պիտի նկարուի պատին վրայ  
լուսաւոր ուղղանկիւնի մը ձեւով կամ հաւկթա-  
ձե . և եթէ յարմար կերպով զետեղած էք պատին  
վրայի թռուղթը ու ձեր ձեռքը ունեցած խաւա-  
քարտէ պէպէքները ճարտարտարօրէն . կրնաք  
խաղցնել (տես պատկեր) ճրադին ու հայելիին  
մէջ տեղը , այն ատեն պիւի տեսնէք որ ուրուա-  
կանի պէս փոքրիկ ստուեր եր պատին փակուած  
ճերմակ թռուղթին վրոյ շոշան կ'ընեն եւ հանդի-  
սատեսը որ սեղանին առջեւ նստած է , բնաւ  
պիտի չկրնայ գիտնալ գործածուած միջոցը :


ԿԱՒԱՔԱՐՏԵ ԶՈՒԿԻՆ ԼՈՂԱԼԸ



Պատկերին մէջ տեսնուած ձեւով խաւաքարտէ ձուկ մը շինեցէք եւ զայն ջրով լեցուն ամառի մը մէջ դրէք. այս ձուկին շարժում տալու համար (ա) նշանակէալին մէջ քանի մը կաթիլ ձիթախւղ կաթեցուցէք. ձիթախւղը (բ) նշանակէտէն դուրս պիտի ելնէ, որով ձուկը դէպ ի յառաջ կ'սկսի շարժիլ.

Փորձը զուարճալի է, եթէ ուշադրութեամբ պատկերին նայինք, աւելի բացասարութեան պէտք չի ննար:

ՆՈՐ ԽԱՂԱԼԻԿ ՄՀ



Վերի պատկերը նոր հնարուած զբօսալի խաղալիկ մը կը ներկայացնէ , որ խանութները եւ վաղոցները ծախուգած գունաւոր ու զնառակար խաղալիկներուն չի նմանիր . Այս խաղալիկը փոքր տղաքները շատ կը դու արճացնէ , վասն զի խիստ զրոսուցիչ է միանդամայն եւ գիտական . շինելն ալ շատ պարզ եւ գիւրին է , ինչպէս կը հասկցուի պատկերէն՝ եթէ ուշադրութեամբ դիտենք զայն .

Անիւի նման տափակ եւ կլոր տախտակ մը պէտք է շինել , որուն մէջը պարապ պիտի ըլլայ . այս մնամէջ տախտակին մէկ կողմը՝ բերնով փշելու համար խողովակ մը , եւ տախտակին տափակ երեսին վրայ ճիշդ մէջտեղը խողովակ մը , եւ նոյն մակերեսին վրայ՝ քսմխտի՝ ձախ կողմը ուղղահայ-

եաց երկնկէկ ուրբը՝ փայտ մը զետեղելու է . սոյն փայտին ծայրը հորիզոնական ուղղութեամբ եւ ուղղանկիւն ուրիշ փոքրիկ դայտ մը դամելու եւ այս փայտին ալ ծայրը ողակաձեւ առասան (սէճէմ) մը անցունելու է . կլոր տախտակին մէջտեղի փոքրիկ խողովակին վրայ սունկէ եւ կամ ուրիշ թեթեւ բանէ մը շինուած ու մէջէն մետաղէ . թեր մը անցուած գնտակ մը դրուելով , նոյն թելին մէկ ծայրը ակիշաձեւ ծռելու է :

Խաղալիկին շինութիւնը այսպէս աւարտելէ . ետքը , եթէ զայն ուղենք գործածել՝ տախտակին մէկ կողմէ խողովակէն ուժով մը փչելու է , (տես պատկեր) որպէս զի նոյն թեթեւ գնտակը վեր ելնէ եւ անոր ծայրի մետաղէ ակիշաձեւ թեվերի օղակաձեւ առասանին անցնի .

Այս գործողութիւնը կարծուածին չափ դիւրին չըլլալուն համար քիչ մը փորձի եւ վարժութեան կարօտ է , եւ աղայք ալ սոյն փորձին ատենը «Յաջողեցար , չի յաջողեցար ,» ըսելով՝ լաւ մը կ'զբանուն :

Վերոյիշեալ կլոր եւ տափակ սնամէջ տախտակը եթէ քիչ մը հաստակէկ խաւաքարտէ շինենք , եւ խողովակներն ալ փոխանակ թիթեղին եղէգէ դնենք՝ տախտակին ու թիթեղէ խողովակներու պատրաստութեանը համար ընելիք ծասսերնիս շահած կ'ըլլանք :

ԹՈՒՂԹԻ ԿՏՈՐՆԵՐԻ ԱՆՈՒԱԿ ՄԸ



Ժապաւինաձեւ՝ 15 Հարիւրորդամեթր երկայնութիւն եւ 2 հարիւրորդամեթր լայնութիւն ունեցող երկու կտոր թուղթ առէք . Այս թուղթերն իրարու հետ պլորեցէք մինչեւ 10 հարիւրորդամեթր երկայնութիւն , եւ մնացեալ 5 հարւիրորդամէթր մասը բաց թողլով , երկու կողմին ծռեցէք . Այս երկու թուղթի կտորները ինչպէս Ա . պատկերին մէջ կը տեսնուի , դաղղիերէն Վ գրին ձեւը կ'առնեն ,

Այսպէս կարճ միջոցի մը մէջ խաղալի մը շինած կ'ըլլաք . Այս թուղթը հանդարտ օդի մը ատեն եթէ պատուհանէն վար ձգէք , պիտի տես-

նէք որ ուղղահայեաց դիրք մը առած՝ շողենաւ-  
ւի մը անիւխն պէս կը սկսի դառնալ, եւ անչափ-  
արագօրէն որ չէք նշմարեր թուղթին երկու ծայ-  
րերը։

Թուղթի կտորներէ շինուած այս անուակին  
ասպէս դառնալը օկոյ ճնշումէն առաջ կու դայ։  
Այս ճնշումը հորիդոնական դիրքով մը ծռած եր-  
կու թուղթի թեւերուն վրայ կ'ընէ իւր աղդեցու  
թիւնը ու կը դարձնէ դանիկայ։ Օդոյ հակազդե-  
ցութիւնն է նաև որ անկումը կը ծանրացնէ, և  
այսպէս այս թուղթէ անուակը թէ խաղայիկ մը  
կ'ըլլայ և թէ վայրէջքի գործիք մը միանդ աման։



Սենեկի մը մէջ աթոռին վրայ ելէք, և հը-

նար եղածին չափ բարձրէն օդին մէջ թող տուէք  
զայն, (տես պատկեր Բ.) ու պիտի տեսնէք որ  
կամաց կամաց պիտի ոկտի վայրէջքը :

Մանուկներու համար լաւ զրօսանք մը կրնայ  
ըլլալ ասիկայ, եւ աւելի լաւ՝ եթէ դունաւոր  
թուղթէ շնչնէք : Պարաէզին մէջ քանի մը տղաքներ  
դժնուած միջոցին, եթէ վերը նկարագրուած  
ձեւով շինուած քանի մը այսպիսի անուակներ  
թող տաք պատուհանէն, տղաքները նորօրինակ  
թիթեռնիկներ կարծելով ուրախութեամբ պիտի  
փութան բռնել դանոնք :

ԻՒՍ ԶՈՒԱՐՃԱԼԻ ԶԲՈՍԱՆՔ ՄԸ



Տակաւին կեանքի շրջանին առաջին մասին մէջ են . խաղալ , խնդալ , վազել կ'ուղեն եւ ամեն կերպ անառակութիւններ կ'ընեն . Պիտի հետաքրքրուիք անշուշտ իմանալու թէ որո՞նք են այդ չարաճճիները . Անոնք սիրունիկ , անմեղունակ մանկիկներն են "ը ընտանիքի մը պարծանաց և երջանկութեան դրամագլուխը կը կազմեն . կ'ուղեն խաղալ , ըսինք , այո' , բայց անոնց համար առնուելիք խաղալիկներու ընտրութեան մէջ ալ


խոհեմութիւն կը պահանջուի . ընտրուած խաղա-  
լիկները ամեն անտեղութենէ զերծ պէտք է ըլ-  
լան . ահա այս կարդէն է առաձգական իրմէ շին-  
ուած օդաչու դունան (լոռիկ պալն) , որ բոլորովին  
անվասո է , եւ դիցուք թէ հատ մը առած եք ա-  
տոնցմէ . փոքրիկ Բուրմինէին համար , որ քիչ մը  
ատեն զբօնելէ վերջը մէկդի նետած է զայն .  
կ'երեի թէ ա'լ ձանձրացած է անկից , մանաւանդ  
որ դունախն մէջ դ անուած կաղը ծակոսիքներէն  
հետղիետէ դուրս ելնելով , գունախն վրայ խոր-  
շմներ — փոթեր — կաղմած են . Արդ , պէտք է  
դ խոնալ որ ալդ խորշոմած դունոր դարձեալ ըզ-  
րոսանքի մը առարկայ կրնայ ըլլալ փոքրիկին հա-  
մար . թէ ի՞նչպէս .

Ահաւասիկ . Այդ \* / ծկուած ու խորշոմած գուն-  
որ սենեկին մէկ ծայրը դրուած աթոռի կամ սե-  
ղանի մը վրայ դնելէ ետքը , եթէ ափկինը արագ-  
շարժումով մը քովէն հեռանայ եւ ուրիշ սենեակ  
մը կամ սրահը երթար՝ գունոր՝ պատկերին մէջ  
տեսնուածին պէս պիտի հետեւի իրեն , և փոքրիկ  
մանկիկն ալ խնդալով ետեւէն կը վազէ որ բռնէ .  
եթէ տիկինը կանգ առնու՝ գունան ալ կը կենայ ,  
եթէ շտապէ՝ գունան ալ կը վազէ . միթէ զուար-  
ճալի չէ՝ այս զբօպանքը . բայց թերեւս պիտի  
հետաքրքրուիք գունախն այդ զարմանալի շարժ-  
ման գաղտնիքն հասկնալու . ուրեմն ըսենք .

Երբ գունտը սեղանի կամ աթոռի մը վրայ  
զրուելէ ետքը տիկինը արագ շարժումնվ մը քո-  
վէն կը հեռանայ՝ անոր յրջազգեստին ետեւի կող-  
մը դատարկութիւն մը կը զ ոյանայ, եւ այդ դա-  
տարկութիւնը գրաւելու համար օդը զ էալ յա-  
ռաջ շարժում մը կ'ընէ, որով զ ունան ալ կը մըդ-  
ուի, այսպէսով ուր որ ալ երթայ՝ զ ունաը կար-  
ծես մադական զօրութենէ մը մղեալ ափենոչ կը  
հետեւի :

Հարկ է ըսել թէ սոյն փորձը տիկնաք կամ օրի-  
որդք ընելու են որ յաջող արդ իւնք մը ունենայ,  
որովհետեւ անոնց շրջազգեստները բնականաբար  
աւելի մեծ շարժում կը բերեն օդին մէջ քան այր  
մարդոց հագուստներն :

## ԲՆՑԱՆԵԿՈՆ ՎԻՃԱԿԱՀԱՇՊԱՆՈՒԹԻՒՆ



Յախճառակեայ պնակիւմը շուրջը փակցուցէք  
խաւաքարտէ կտրսւած մարդոց կամ անասուննե-  
րու վոքրիկ պատկերներ, եւ հիամ պարզապէս  
մելանով վոքրիկ նկարներ կամ թուանշաններ  
դժեցէք, ամենքն ալ իրարմէ հաւասար հեռա-  
ւորութեամբ :

Յատկապէս պատրաստուած այս պնակը դրէք  
ուրիշ աւելի մեծ պնակի մը մէջ, որ պէտք է քիչ  
մը կորնթարդ ըլլայ, (և այսպէս կ'ըլլայ սովորա-  
բար) . Յաւական է ձեռքով պղտիկ հարուած մը  
տալ պղտիկ պնակին, և պիտի դառնայ նա ինքն  
իր վրայ :

Եթէ մեծ պնակը կորնթարդ չըլլայ, անոր  
մէջ քիչ մը ջոր դրէք, այնպէս որ վիճակահա-  
նութեան անխւըներկայացնող պնակը կարենայ ա-

նոր մէջ շարժիլ ինքն իրեն, եւ այն ատեն երկու պնակները իրարու դոլելէ դադրելով պղտիկը դիւրաւ պիտի դառնայ :

Այսպէսով իրիկուան կերակուրէն վերջը լաւ ժամանց մը պիտի կրնաք ունենալ, իւրաքանչիւր ոք պնակին շուրջը փակցուած պատկեր մը կամ թիւ մը կ'ընտրէ, որ եթէ իրեն առջին դայ՝ դըրաւը շահած պիտի ըլլոյ :

Բայց հետեւալ կերպով աւելի դ խտական եւ աւելի զուարճակի դրօսանք մը կրնաք ունենալ :

Պնակին շուրջը փակցնելիք խաւաքարտէ մորդերուն իւրաքանչիւրին տարբեր տարբեր դիրքեր տոււէք, այնպէս որ երբ պնակը դառնայ՝ ձեր աչքին առջեւ կը տեսնէք մարդու մը յաջորդական դիրքերը, որ թեւերը կը բարձրացնէ ու կ'իջեցնէ : Այսպէս օրինակի համար, խաւաքարտէ մարդերուն մէկին թեւերը կախուած են, միւսին թեւերը քիչ մը աւելի մարմնէն հեռացած, յաջորդը հորիզոնական դիրքով երկնցուցած, անկէ ետքինը քիչ մը աւելի վեր բարձրացուցած եւ ամենէն վերջինը ուղղահայեաց դիրքով բոլորովին վերբարձրացուցած է :

Հիմա, մէկ աչքերնիդ դոցելով, միւսովը այցաքարտի մը վրայ բացուած դնդասեղի ծակէ մը դիտեցէք ուղղակի՝ պնակին դարձած միջոցին մարդերուն ըրած շրջագիծը. այն ատեն մէկ անձ միայն պիտի տեսնէք, որ կենդանի էակի մը պէս շարժումներ կ'ընէ եւ իւր թեւերը յաջորդաբար կ'առնեն վերոյիշեալ դիրքերը . (տես պատկեր) :

ՃՐԱԴԻՆ ՎՐԱՅ  
ԹՈՒՂԹԻ ՍԱՆՈՎ ԶՈՒՐ ԵՌԱՑՆԵԼ




Առէք բաւական թանձը թղթի իւերթ մը , ու  
15 հարիւրորդամէթը տրամագծով մաս մը կըտ-  
րեցէք , յետոյ ամուրկէկ երկաթեայ թել մը  
ընտրեցէք եւ երկու ծայրերն իրարու միացնելով  
Դ հարիւրորդամէթը տրամագծով անուր մը [իալէս]  
ձեւացուցէք : Դարձեալ միեւնոյն երկաթէ թելէն  
մաս մը առնելով պտուտակաձեւ ոլորեցէք , այն-  
պէս որ ճրագին շուրջը պատէ (տես պատկեր) .  
Պտուտակաձեւ երկաթեայ թելին վերի ծայրը՝  
միևնոյն թելէ շինուած անուրին մէկ կէտին կը-

ցելով՝ հաստատեցէք։ Հարկ է գիտնալ որ այդ-  
կոնաձեւ եւ ռլորուած թուղթին անուրին շրջա-  
դաէն վեր մնացած մասը գոնէ զ հարիւրորդա-  
մէթրի չափ ըլլուլու է։

Այս գործողութիւնները կատարելէ և տքը կո-  
նաձեւ թուղթին մէջ ջուր լեցուցէք և ճշադն  
ալ վաւեցէք։ Քանի մը վալրկեանէն ձեր այդ-  
թղթէ սանին մէջ լեցուած ջուրը ճրադին վառ-  
ուելէն յառաջ եկած ջերմութեան աղդեցու-  
թեամբ կ'սկսի եռալ։

Արդարեւ դարմանալի է այս փորձը, վասն զի  
պիտի տեսնէք որ թուղթը չ'այլիք։

ԴԺՈՒԱՐԻՆ ՓՈՐՉ ՄԸ



Խնդիրը՝ երկու անձերու պատկերին մէջ տեսնուած ձեւով աջ ոտքերնին աջ ձեռքով բռնած

եւ ձախ ծունդերնուն վրայ առանց հաւասարակութիւնը կորօնցնելու՝ կենալնուն վրայ է :

Այս երկուքին ալ ձախ ձեռքը պիտի դանուի մէկ մէկ ճրագ , մին վառած՝ միւսը մարած :

Արդ , պէտք է որ իրենց այս դիրքին մէջ , մարած ճրագը վառուածէն վառեն :

Իր տեսնէք որ դժուարին առաջարկ մը չէ այս , բայց չէք կրնար երեւակայել թէ ճրագը վառելու յաջողելէ առաջ , քանի անդամներ հաւասարակշուութիւննին կորսնցնելով գետինն իյնալու կամ դլտորուելու դժբաղդութիւնը պիտի ունենան եւ հանդիսատեսին ծիծաղը շարժեն :

Միայն թէ տախտակամածին վրայ ճրագի րիծեր յառաջ չի բիրելու համար գործողութիւնը սկսելէ առաջ լրագիր մը տարածելու է :

---

ԵԱՂԻԿՆԵՐԸ ԴՈՅՆԶԴՈՅՆ ՆԵՐԿԵԼ



Առանց ունեցած անուշ հոտերնին կարսնցնելու՝ պիտի կարենանք ներկել ճերմակ դոյն ունեցող յասմիկը, նարկիաը, մեխակը եւ չեփորուկը, հետեւեալ ամենապարզ եղանակաւ։

Նոյն ծաղիկներէն ճեր ուզածը ևթէ կուպոյտ մելան ով լեցուն շիշի մը մէջ դնէք, — ջուրը դնելու պէս — քանի մը վայրկիանէն պիտի տեսնէք որ անուշ կարմիր (բնա-


ուեցած մը կը ստանան. յետոյ դանոնք պարզ ջրով լի  
ամանի մը մէջ զբէք լնչպէս որ կ'ընէք չի թումնեցնելու  
համար:

Պէտք է ղիտնալ որ այս պարզ ջուրը մի միտյն  
ծաղկանց կոթերուն մէջ մնացած մելանը կը մաքրէ. խել  
զունաւորուած վերի թերթիկներուն վրայ ո եռ է աղկե-  
ցութիւն չ'ըներ:

Կոթերուն մէջ Ճողվուած մելանը այս կերպով մաք-  
րուելէ եռքը եթէ նոյն մելանով խաւուուած ջուրին աեղ  
մաքուր ջուր լեցնէք, աևսնողները գտղոնիքին չեն կօր-  
նար վերահասու ըլլալ, միանդամայն պիտի զարմանան թէ  
ի՞նչողէս անուշ-կարմիր զոյն մը առեր է յասմիկը՝ որուն  
բնական զոյնը ճերմակ կամ զեղին-կ'ըլլայ:

Զմոռնանք ըսել որ եթէ զեղնազոյն յասմիկը սոյն  
փորձին ենթարկենք, մութ, անսախորժ զոյն մը կ'առնու:

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԿՇԻՌ ՄԸ



ԵՐԲԵՑ տանը մէջ ո և է բան կշռելու պէտքը կ'ունենաք, բայց եթէ կշիռ չունիք, ի՞նչ կ'ընէք. Ահաւասիկ ձեղի տնտեսագիտական կշիռ մը շինելու կերպը, քանի որ զայն կազմող մասերը քիչ մը առասան եւ երկու կտոր խաւաքարտէ կը բաղկանան. Պատկերն ուշադրութեամբ եթէ դիտենք, կլնանք հառկնալ անոր պարզութիւնը.


Մէկ մէդը երկայնութեամբ հսրիզոնական գիր-  
քով գրուած տախտակի մը երկու ծայրերը մէկ  
մէկ գամ գամեցէք . 4 , 50 մէդը երկայնութեամբ  
առասան մասնելով ճիշդ մէջտեղը հանգոյց մը  
ըրէք . Այս առասանին ծայրերուն ուրիշ երկու  
առասաններ ալ կցելով , միւս ծայրերն ալ տախ-  
տակին վրայ գամուած գամերուն կապեցէք :

Երկու հատ րարակ տախտակներ կամ հաս-  
տկէլ խաւաքարտներ քառակուսի ձեռվ կտրեցէք .  
ասոնք կշիռներուն երկու նժարները պիտի կադ-  
մեն :

Մէջտեղը հանգոյց մը ձեացած տեղը փայտէ  
կամ ուրիշ նիւթէ մը նիղակաձեւ աղեղ մը զե-  
տեղեցէք , եւ իր հանգիպած տեղը քառակուսի  
խաւաքարտի կտոր մը փակցնելով պէտք եղած  
բաժանումներն ըրէք :

Կշիռը շինուեցաւ . Մազի չափ սխալ չցւցնե-  
լուն վստահ կրնաք ըլլալ . Հիմա ուզած նիւթեր-  
նիդ կրնաք կշռել , ինչպէս որ պատկերին մէջ  
հաւու մը կշռուիլը կը տեսնէք :

ԴՐԱՄՆ ԿԸ ԲԱԼՁՄԱՊԱՏԻՈՒԻ



Ծ

ԶԵՌՆԱՁԱւԹԵԱՆ ՄԵջ շատ անդամ խիստ  
պարզ պատճառներ զարմանալի արդիւնքներ ա-  
ռաջ կը բերե՞ն։ Ահաւասիկ խաղ մը իրրեւ ա-  
պացոյց։

Նախ եւ առաջ ձեռնածուն թիւ և պատկերին  
մէջ տեսնուածին նման սուրճի ափսէի մը մէջ 7

հատ դրամ կը դնէ , ու կ'առաջարկէ որ հանդիսականներէն մէկը այս ստակներն առնէ , ու բարձըր ձայնով մէկիկ մէկիկ համրելով ափսէին մէջ ձգէ . Այս ատեն ձեռնածուն՝ ներկայացող անձին ափսէին մէջ կը պարզէ ափսէին մէջի դրամները , եւ համաձայն իր առաջարկութեան թէեւ կը ըսկսի համրել դրամները , սակայն ի մեծ զարմացումըն հանդիսականաց կը տեսնուի որ դրամները վախանակ 7ի 14 հատ են .

Գտրծողութիւնը կը կրկնուի , դարմանք զարմանքի վրայ , որովհետեւ մինչ 14 էր առաջ , հիմա ատոնց թիւը 21ի հասած է :

Ասոր գաղտնիքը հասկնալու համար պէտք է հետագայ տողերն ուշադրութեամբ կարդալ .

Խնչպէս պատկերին թիւ 3 մասին մէջ կը տեսնուի , ափսէին տակը երկու յարկէ կազմուած է . այս երկու յարկին մէջտեղը պարապ անջրապետ մը կայ , եւ այդ անջրապետին բարձրութիւնն ալ դրամին թանձրութենէն քիչ մը աւելի է . Այս պարապ միջոցը թիւ 2 կէտէն երկուքի բաժնուած է . եւ այս երկու բաժանութերն ալ ամէն կողմէ գոց են , միայն թէ թիւ 1 եւ 3 կէտերուն մէջ դրամին մեծութեամբ մէկ մէկ գաղտնի ճեղքուածներ կան .

Ուստի խաղը սկսելէն առաջ ձեռնածուն այս երկու բաժանմներուն մէջ ալ եօթնական հատ դրամ կը դնէ , եւ ափսէին մէջի դրամները հանդիսատեսին ափսէին մէջ պարզելու ատեն քիչ մը

շեղ կը լոռնէ , այնպէս որ ափսէին տակի բաժանումներուն մէկուն մէջի ստակներն ալ մեկուեղ անոր ձեռքին մէջ կը լեցուին . Այս դործողութիւնն այնչափ արագութեամբ կը կատարէ որ հանդիսատեսը չի նշմարեր թէ աւելցած դրամներն ո՞ւ սկից կու դան :

Երկրորդ դործողութեան ատենն ալ ափսէն հակառակ կողմին ծռելով միւս բաժանումին մէջ դանուածները կը թափին հանդիսատեսին ձեռքերուն մէջ :

Եթէ ուղէք , ափսէին տակի անջրպետը չորսի բաժնելով , կընաք չորս անդամ դրամները բազմապատկել :

Պէտք է յայտնել նաեւ որ շատ վարպետ ձեռնածուներ այս դործողութիւնը կատարելու համար երկայարկ ափսէի ալ պէտք չունին , այլ աւելորդ դրամը՝ կամ ափսէին տակը երկնցած մատներնուն մէջ , կամ բութամատնուն տակը ափսէին վրան կը բռնեն , եւ կամ իրենց վերարկուին թեւերուն մէջ դանուող դաղտնի դրպանին մէջ պահելով՝ ճարտարութեամբ պէտք եղած ատենը կը դործածեն :

## ՍՏՈՒԵՐԱՄՈԼՈՒԹԻՒՆ

Այս անդամ մեր ընթերցողաց կը ներկայաց-  
ցընենք քանի մը նոր նկարներ, որ կը կազմուին  
միմիայն մեր ձեւքերով, որք ճրագի մը եւ պա-  
տին մէջտեղը բռնուելով, իրենց ձդած շուքը  
մարդոց կամ անասուններսւ զուարճալի կիսա-  
դէմքեր կը կազմէ :



Դիտեցէք հիմա սա կարապը, որ հանդարաօրէն  
կը ճեմէ ջուրերու մակերեսին վրայ, մինչ հովը կը  
չնչէ իւր բացուած թեւերսւն մէջ :



Անկէ ետքը կու դայ որսորդ շունը, (ձեւ 1)  
որ որսին վրայ կը նետուի՝ բերանը բաց, (ձեւ 2)։



Հիմա փոխէ երկու ձեռքերուդ ձեւերը, կը  
տեսնես որ նայն որսորդ շունը պահապղան շուն մը

դարձած է, որ կատաղաբար՝ գողին վրայ յար-  
ձակելու երեւոյթ մը ունի:



Ահա էշը՝ որ կարծես ականջները տնկած՝ դէպ  
ի մարդադետին կը դիմէ.

Քանի մը վայրկեան դադար առնելէ ետքը,  
շարունակենք մեր զբուանքը:

Ահաւասիկ կը տեսնենք ճամբորդ մը, որ կ'ե,

բեր թէ Ավրիկէի ներսերը արեւու հրաժապ ճա



ո.ադ.այլթներէն ազատելու համար գլխարկը ճա-  
կատին վրայ իջեցուցեր է :





Մատներու դիրքերուն պղախի մէկ փոփո-

խութիւնովը՝ նոյն ճամբորդը կը փոխակերպուի  
ուղարի մը դլուինին։

Այէն մարդ առաւել կամ նուազ ճշդու թեամբ  
կրնայ ներկայացնել այն դէմքերն զոր արագօրէն  
աչքէ անցուցինք։

Ահաւասիկ ուրեմն ձեզի զրօսանք մը մշտափո-  
փոխ, զոր ի գործ դնելու համար ո եւ է գործի-  
քի մը պէտք չունիք։





## ԺԱՄԱՑՈՒՑՈՒՐ ՃՐԱԴ

Ներկայ ժամանակիս կարեւոր գիւտերէն մին է սոյն ժամացուցաւոր ճրագը, որ իր ունեցած շատ օդատակարութիւններուն հետ բաղդատմամբ, խիստ պարզ գործիքներով կազմուած ըլլալու առաւելութիւնն ալ ունի :

Նախ պէտք է մետաղեայ խողովակ մը զետեղել կլոր եւ ողորկ տախտակի մը վրայ :

Այս խողովակին վրայ պէտք է հաստատել թափանցիութիւնն անհետացուած ապակի էտրոն մը, որուն վրայ պիտի նշանակուած ըլլան սովորական ժամացոյցներուն վրայ գտնուած 12 ժամի բաժանումները :

Իրեւ ժամացոյցի սլաք առանցքին վրայ առեղ մը ամրցուած է, եւ խողովակին մէջ ծայրը ծանրկէկ գնտակի մը միացուած մետաղեայ թելով մը բանող ճախարակ մը աւելցուած է :

Այս ասեղը՝ քանի որ մոմը վառի, սպառած մամին քանակութիւնը եւ ժամանակը՝ միանդամայն կը ցուցնէ :

Առաջ մամի տեղ ուրիշ նիւթեր կը գործածէին թէեւ, բայց պէտք եղածին չափ օդուտ չէր կրնար քաղուիլ : Զայն բանեցնելու համար բաւ է մոմը վառել, եւ ասեղը ուզուած թուանշանին վրայ բերել :

Մոմին բաղադրութեան համաձայն մէկ ժամ-  
ուան մէջ որոշեալ բարձրութեամբ մը կը վառի,  
եւ այն միջոցին ասեղն ալ առաջին բաժանումէն  
երկրորդ բաժանումին կ'անցնի :

Այսպէսով սպառումն այ, ժամանակն ալ ճշ-  
գիւ կը գիտցուի :

Միայն թէ խողովակին ձեւին համաձայն պէտք  
է շինել գործիքը :

Եղած գործողութիւնը վերը գրուած պատ-  
կերին մէջ որոշակի եւ մանրամասնօրէն կը տես-  
նուի, ուստի եւ փորձը հասկնալու համար ըն-  
թերցողը շատ գժուարութիւն պիտի չկրէ :

ԹՈՒՂԹԻ 026.

Բոլորակ կտրուած խաւաքարտ մը առէք , եւ  
զայն շրջադիմէն սկսելով դէպի կեղ-ըսնը շրջանա  
հաձև կտրեցէք , այնպէս որ խաւաքարտը երկայն-  
էկ երիղի (Հեռէո) մը ձեւն առնէ , միայն թէ թուղ-  
էին դէպի ի շրջադիմէն կողմը մնացած ծայրը քիչ  
մը լայնիէկ թողուցէք և օձի դլուխի մը ձեւը տու-  
էք անոր . Միւս ծայրն նձին տուշնը կը կազմէ :  
Չետու առէք պարզ էս-լը-է շիշ մը և զայն խիցով  
իր գոցէցէք . Այս խիցին վրայ գնդասեղ մը հաս-  
ատելով , պատրաստած թղթեայ օձելնուդ դը-  
լո խը կամ պոչը առ դնդասեղին վրայ ամրցու-  
ցէք . Ապա այս թուղթը թէ ներսէն և թէ դուր-  
սէն ունէ միջոցով մը (օր Շնակի համար մոմէ  
լու ցկիսվ մը) տաքցուցէք . Այս ջերմութեան արդ-  
եամբ , շրջանակաձև կտրուած թուղթը մէկ կող-  
մէն կը լացուի և գալարեսու լով կը սկսի շիշին բո-  
լորտիքը պլլուի իր . Այս խաղը չը տեսնողները վայր-  
կեան մը զայն կրնան ողջ օձ մը կարծել :

ՎԵՐՋ



Պատմ  
Արակ Սլովյանեամի  
Դահիրէ — Մարտիս

ԳԱԱ Եհանարար Գիտ. Գրադ.



FL0541523

ՀԱՏՈՐ Բ.

ԿԸ պարունակէ 40 Հրահանգ և 42 Պատկերներ



Հատոր Ա. Գիճ 5 Դահնեկան

Հատոր Բ. Գիճ 4 Դահնեկան